



Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում
Կանանց քաղաքական մասնակցությունը.
Խնդիրներ և հեռանկարներ

Հասմիկ Շափաղայան
Լուսինե Պողոսյան

- ☎ *Hasmik Shapaghatyan*
- ☎ *Lusine Poghosyan*
- ☎ *Center for Gender and Leadership Studies*

Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներին են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԵՐԵՎԱՆ 2014

Բովանդակություն

Գործադիր ամփոփում	3
Իրավիճակի նկարագրություն	4
Մեթոդաբանություն	13
Կանանց քաղաքական մասնակցության խնդիրները տեղական ինքնակառավարման մակարդակում.....	16
Ամփոփում և առաջարկություններ	25



Գործադիր ամփոփում

Ժողովրդավարության կայացման խնդիրներ լուծող պետության կարևորագույն նպատակներից պետք է լինի քաղաքականության ոլորտում գենդերային հավասարության երաշխավորումը: Տեղական ինքնակառավարման դերն ու նշանակությունը հատկապես կարևորվում են ժողովրդավարության հաստատման, քաղաքացիական հասարակության կայացման տեսանկյունից, ինչի պատճառով առավել ընդգծվում է այս համակարգում կանանց հավասար քաղաքական և քաղաքացիական մասնակցությունը: Հետազոտությունը փորձ էր հասկանալու ընտրություններում կանանց մասնակցության իրական պատճառները, հետևաբար նաև կանանց ինքնաբացարկ հայտնելու խորքային պատճառները, վերհանել այն կարծրատիպերը, որոնք խոչընդոտում են կանանց քաղաքական մասնակցությանն ընդհանրապես: Համայնքի ղեկավարի ընտրությունների ընթացքում կանանց ինքնաբացարկների պատճառների ուսումնասիրությունը լուսաբանում է ներկայիս հայ հասարակության և քաղաքականության որոշ հիմնարար խնդիրներ: Հայաստանում կանանց քաղաքական մասնակցությունը բազմազան հետազոտությունների առարկա է, քննարկվում է տարբեր հարթություններում, սակայն առաջարկվող տեսանկյունից առավելապես ներկայացվում և քննարկվում է հիմնականում ՋԼՄ-ներում կամ հասարակական տարբեր կազմակերպությունների համացանցային ռեսուրսներում:

Հետազոտության նպատակն էր բացահայտել ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց քաղաքական մասնակցությանն առնչվող որոշ հիմնախնդիրներ, քննարկել և առաջադրել որոշ նոր լուծումներ և մոտեցումներ, որոնք կնպաստեն կանանց քաղաքական մասնակցության ակտիվացմանը ՏԻՄ ոլորտում, կնախանջեն նոր հետազոտությունների անհրաժեշտությունը:


Իրավիճակի նկարագրություն

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման (ՏԻ) համակարգի հիմքերն ամրագրվեցին 1995 թ.՝ ՀՀ Սահմանադրության ընդունմամբ: Ըստ ՀՀ Սահմանադրության 7-րդ գլխի 104-110 հոդվածների Հայաստանում «տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում», իսկ 2002թ. ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն «համայնքը պետական համակարգի ժողովրդավարական հիմքն է: ՀՀ Սահմանադրության 104-րդ հոդվածով տեղական ինքնակառավարումը սահմանվում է որպես համայնքի իրավունքն ու կարողությունը՝ սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը¹: ՀՀ ՏԻ իրականացումը կարգավորվում է նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, որը ստեղծվել է «Տեղական ինքնակառավարման մասին» Եվրոպական Խարտիայի հիման վրա, (ՀՀ վավերացրել է 2002թ.): Տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ) համայնքի ղեկավարն ու

¹ ՀՀ Սահմանադրություն, <http://parliament.am/parliament.php?id=constitution&lang=arm>

համայնքի ավագանին են, որոնք օրենքով սահմանված կարգով² ընտրվում են չորս տարի ժամկետով ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ³:

Հայաստանի Հանրապետությունը ՀՀ Սահմանադրության և «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համաձայն բաժանված է 10 մարզերի (Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի,



Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի մարզեր), որոնք էլ իրենց հերթին՝ քաղաքային և գյուղական համայնքների: Հայաստանի համայնքները 915-ն են, որոնցից 49-ը քաղաքային են, 866-ը՝ գյուղական⁴:

2013 թ. ընդունվեց «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը: Օրենքով սահմանված են գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականությունը, մեխանիզմները, իրավական երաշխիքները և այլն: ՀՀ քաղաքականության գենդերային բաղադրիչը միայն նշված օրենքով չէ, որ արտահայտված է: ՀՀ վավերացրել է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր

² «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1305&lang=arm>
³ ՀՀ Սահմանադրության հոդված 107, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 7, ՀՀ ընտրական օրենսգիրք
⁴ Տվյալներն ըստ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնական կայք էջի. <http://mta.gov.am/hy/the-lsg/>

ձևերի վերացման մասին» կոնվենցիան (1993թ.), ստանձնել է Պեկինի 4-րդ համաշխարհային համաժողովի (1995թ.) հիմնական հանձնարարականներով սահմանված պարտավորությունների կատարումը, 2004թ. ՀՀ կառավարությունն ընդունել է «ՀՀ կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. Ազգային ծրագիր» և այդ ծրագրի միջոցառումների ցանկը: 2010թ. ՀՀ կառավարությունն ընդունել է «Գենդերային քաղաքականության հայեցակարգը»⁵, 2011թ.՝ ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը, Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը և Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը, 2014թ. ապրիլին հավանություն է տվել Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության 2014թ. միջոցառումների ծրագրին և այլն: ՀՀ Գենդերային հայեցակարգն, ըստ էության սահմանում է կանանց և տղամարդկանց համար իրավահավասարության, հավասար հնարավորությունների ապահովում, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում սեռերի հավասար մասնակցության ապահովում, սեռի հատկանիշով խտրականության հաղթահարում: Հայեցակարգի գաղափարական հիմքն այն համոզմունքն է, որ ժողովրդավարության, իրավական, սոցիալական պետության կայացումն անհնարին է առանց գենդերային հավասարության, հետևաբար հայեցակարգի ստեղծման հիմնական նպատակը հասարակական, քաղաքական, տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում, կառավարման

⁵ ՀՀ Գենդերային հայեցակարգ 2010, ՀՀ կառավարություն, Վարչապետի նկից կանանց հարցերով խորհուրդ, Գենդերային քաղաքականության փաստաթղթեր, http://www.gov.am/u_files/file/kananc-xorh/Gender-hayecakarg.pdf

բոլոր մակարդակներում գենդերային չափումը ներառելն է, որը հնարավորություն կտա ապահովել ժողովրդավարության կայուն զարգացում: Ընդ որում, գենդերային անհավասարակշռության հաղթահարումը խթանելու համար պետք է նպաստել կանանց՝ տարբեր ոլորտներում ներգրավվածությանն ու մասնակցությանը, կանանց հնարավորությունների ընդլայնմանը, ինչը հնարավոր է իրականացնել պետական կառույցների, քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից (ցանկալի է՝ համագործակցությամբ) հատուկ ծրագրեր մշակելու միջոցով: Փաստորեն, ձևական իմաստով՝ իրավաբանական տեսանկյունից գենդերային հավասարությունն իրականություն է Հայաստանում, ինչն, իհարկե, չի նշանակում դրա փաստացի իրականացում: Գենդերային հավասարությանն ուղղված ծրագրերի, ՀՀ գենդերային քաղաքականության տարբեր տարիների միջոցառումների ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքների հաշվետվությունների⁶ դիտարկումը և ի թիվս այլ հետազոտությունների, օրինակ Համաշխարհային տնտեսական ֆորումի «Աշխարհում գենդերային անհավասարության զեկույցի» շրջանակներում ամենամյա հաշվետվությունները⁷ համեմատելիս, երբ նշված համաշխարհային զեկույցի շրջանակներում տարեցտարի ՀՀ նահանջում է, հարց է առաջանում՝ «արդյո՞ք իրականացվող աշխատանքները պարզապես ձևական բնույթ ունեն և որևէ կերպ չեն հաղթահարում հասարակության մեջ առկա գենդերային անհավասարությունը»: ՀՀ գենդերային հայեցակարգի իրականացումը ենթադրում է Ազգային մեխանիզմի

⁶Օրինակ տես՝ Տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2012 թվականի միջոցառումների ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին, http://www.gov.am/u_files/file/kananc-xorh/3.pdf

⁷Աշխարհում գենդերային անհավասարության զեկույց-2013, <http://www.weforum.org/reports/global-gender-gap-report-2013>

ստեղծում, որը «կօժտվի ազգային և տեղական բոլոր մակարդակների ինստիտուցիոնալ մեխանիզմների և կառույցների գործունեության համակարգման լիազորություններով, կունենա գենդերային բաղադրիչի ներմուծման իրավասություն հասարակական կյանքի բոլոր ոլորտների քաղաքականությունում և զարգացման ծրագրերում: Հայեցակարգում նշված են և՛ առկա խնդիրները, և դրանց հաղթահարման հիմնական ուղղությունները, սակայն թե՛ պետական կառույցները, թե՛ առավել ևս հասարակությունը պատրաստ չեն դրանք կիրառել, պատրաստ չեն այդ սկզբունքներով ապրել: Գյուղաբնակ կանանց հիմնախնդիրներին է անդրադառնում, օրինակ «ՀՀ Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը», որտեղ 21-23 կետերում ձևակերպված են այն հիմնական նպատակներն ու խնդիրները, որոնք հատկապես կխթանեն գյուղական վայրերում «կանանց մասնակցության հնարավորությունները գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում», կբարելավեն «գյուղական բնակավայրերում կանանց աշխատանքային կենցաղային պայմանները», կխթանեն գյուղի կանանց աղքատության հաղթահարումը⁸:


Ինչպես արդեն նշվեց, տեղական ինքնակառավարումը Հայաստանում իրականացվում է քաղաքային և գյուղական համայնքներում՝ Համայնքի ղեկավարի և Ավագանու ինստիտուտի միջոցով: Համայնքի ղեկավարների ընտրությունները տեղի են ունենում օրենքով սահմանված ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրությունների միջոցով, մերժելով խտրականության ցանկացած հիմք: Ազգային ժողովի

⁸ ՀՀ Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիր, Հավելված թ. 1 ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 20-ի նիստի թ. 19 արձանագրային որոշման, http://www.gov.am/u_files/file/kananc-xorh/gender-strategic%20programm%202011-2015.pdf

համամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուներ առաջադրելու մասին դրույթը սահմանում է ընտրական քվոտաների համակարգ, որն ապահովում է կանանց 20 տոկոս ներկայացվածություն կուսակցությունների ցուցակներում՝ «Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի 2-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ թվով հնգյակներում (2-6, 2-11, 2-16 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 80 տոկոսը»⁹: Խնդիրն այս օրենքով չի լուծվում, և ՀՀ օրենսդիր մարմնում կին պատգամավորների թիվը ընդամենը 10,7 տոկոս է: Քվոտաների որևէ համակարգ չի կիրառվում ՏԻՄ ընտրությունների դեպքում, ինչի արդյունքում ստացվում է կանանց առավել պակաս մասնակցություն. հետազոտության ժամանակահատվածում միայն 2.05 տոկոս կանայք են եղել համայնքի ղեկավարներ: 2014թ. մարտի 9-ին տեղի ունեցած Համայնքի ղեկավարի ընտրությունները ևս մեկ անգամ խնդիրը դիտարկելու պահանջ առաջացրեցին, քանի որ հաճախ կրկնվող մեծաթիվ ինքնաբացարկների դեպքերը ՏԻՄ ընտրություններում վտանգում են ժողովրդավարության հիմնական գաղափարական հենքը՝ ազատ, ազնիվ մրցակցություն, այլընտրանքային ընտրություններ: Մարտահրավերը հատկապես վտանգավոր է դարձնում կանանց կողմից ինքնաբացարկ հայտարարելու խնդիրը: 2014թ. մարտի 9-ի 40 համայնքի ղեկավարների ընտրություններին գրանցվել էր 28 ինքնաբացարկ, որոնցից 4-ը կանայք էին՝ ինքնաբացարկների 13.8 տոկոս: Նշված 28 ինքնաբացարկից 23-ը՝ 82.14 տոկոս

⁹ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 108, կետ 2, http://res.elections.am/images/doc/_code.pdf

ապահովել էր մնացած միակ թեկնածուի հաղթանակ: Փաստը ևս մեկ անգամ ստիպում է ուշադրությունը կենտրոնացնել ձևական այլընտրանքային թեկնածուների խնդրին, ինչն առավելապես անհանգստացնող է դառնում այն պարագայում, երբ շահարկվում է գենդերային ներկայացվածության գործոնը: Այս թվերը ևս մեկ անգամ ակնհայտ են դարձնում հայ հասարակության վերաբերմունքը կանանց քաղաքական մասնակցության նկատմամբ: Փաստն առավել զարմանալի է այն տեսանկյունից, որ կանանց քաղաքական մասնակցության աստիճանը չի բարձրանում անկախ այն համգամանքից, որ գյուղական բնակավայրերում տղամարդկանց միգրացիայի մեծ աստիճան է գրանցվում: Ներկայացված առնչությունների գլխավոր խնդիրն այն է, որ նմանատիպ վերաբերմունքը թե՛ ժողովրդավարական ընտրություններին ընդհանրապես, թե՛ կին քաղաքական առաջնորդներին մասնավորապես, կարող են ամրապնդվել որպես ավանդույթ և դառնալ կենսակերպ: Խնդիրները հատկապես վտանգավոր են տեղական մակարդակում ժողովրդավարական ավանդույթների հաստատման, կանանց քաղաքական մասնակցության տեսանկյունից, ինչն էլ հիմք հանդիսացավ ՏԻՄ մարմիններում կանանց ներկայացվածության ցածր մակարդակի պատճառների




բացահայտման, ուստիև հետազոտության նպատակի ձևակերպման համար : Հետազոտության ժամանակահատվածում 915 համայնքներից միայն 18 համայնքի ղեկավարներն են եղել կանայք, ընդ որում՝ կանայք միայն գյուղական համայնքների ղեկավար են, քաղաքային համայնքներում կանայք որպես ղեկավար

ներկայացված չեն:

Ըստ մարզերի՝ կանանց ներկայացվածությունը որպես համայնքի ղեկավարներ երևում է հետևյալ գծապատկերում

ՀՀ Համայնքների ղեկավարները 1



Հետազոտության խնդիրներն էին՝

- Ուսումնասիրել կանանց քաղաքական մասնակցությանն առնչվող, հատկապես ընտրությունները և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը, իրավասություններն ու լիազորությունները կարգավորող օրենսդրական դաշտը:
- Բացահայտել կանանց՝ տեղական ինքնակառավարման մարմիններում թեկնածություն առաջադրելու, հետագայում ինքնաբացարկ հայտնելու խորին պատճառներն ու շարժառիթները:

- Համեմատել ՏԻՄ ընտրություններում հաղթած կանանց և ինքնաբացարկ հայտնած կանանց կարծիքները՝ կանանց քաղաքական մասնակցության խնդիրների, ինքնաբացարկ հայտնելու և հարակից այլ հարցերի առնչությամբ:
- Վերհանել ՏԻՄ կանանց քաղաքական մասնակցությանն առնչվող առանձնահատկությունները:

Քանի որ կանանց քաղաքական մասնակցության պակասը հասարակության մեջ արմատացած համակարգային խնդիր է, այն կարող է լուծվել միայն միասնական և համակարգված միջոցներով, որոնք կներառեն հասարակության բոլոր ոլորտները միաժամանակ: Հետազոտության ընթացքում դիտարկվել և քննարկվել են կանանց հզորացմանը նպաստող և խոչընդոտող տարբեր մոտեցումներ, քննարկվել են քաղաքականության մեջ փոփոխությունների բազմազան առաջարկություններ, օրինակ՝

- ընտրական օրենսգրքում քվոտաների ներմուծում նաև ՏԻՄ ընտրությունների համար,
- աջակցություն կանանց, հատկապես ՏԻՄ մարմիններում քաղաքական մասնակցության պարագայում,
- կյանքի տարբեր ոլորտներում կանանց հնարավորությունները մեծացնելու հետևանքով կանանց քաղաքական մասնակցությունը խթանելու հարցերը
- կանանց համար տարբեր թրեյնինգների կազմակերպում,
- համայնքային ծրագրերի մշակում՝ գենդերային կարծրատիպերը հաղթահարելու համար,

- վարչական այնպիսի փոփոխությունների իրականացման հնարավորություններ, որոնք կխթանեն կանանց քաղաքական մասնակցությունը, անգամ կդարձնեն այն պարտադիր,
- կանանց իրավունքների և հնարավորությունների իրազեկման ծրագրերի իրականացում,
- ՀԿ ոլորտի, մասնավոր և այլ կազմակերպությունների հետ համագործակցության այնպիսի ծրագրերի իրականացում, որոնք կերաշխավորեն կին գործակիցների մասնակցությունը:

Մեթոդաբանություն

Հետազոտության խնդիրների լուծման համար կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- Ոլորտին առնչվող իրավական փաստաթղթերի վերլուծություն
- Խորացված հարցազրույցներ
- Համեմատական վերլուծություն
- Փորձագիտական հարցումներ
- Վիճակագրական տվյալների ուսումնասիրություններ

Ոլորտին առնչվող իրավական փաստաթղթերի վերլուծության միջոցով ուսումնասիրվել է ոլորտին առնչվող իրավական դաշտը, ոլորտը կարգավորող ներպետական և միջազգային փաստաթղթերը:

Խորացված հարցազրույցների համար առանձնացվել է հարցվողների 2 խումբ՝

1. ինքնաբացարկ հայտնած կանայք
2. հետազոտության ժամանակահատվածում գործող համայնքի կին ղեկավարները:

Հարցազրույցների հիմնական խնդիրն էր՝ բացահայտել այն խորքային պատճառները, որոնք ընկած են կանանց թեկնածություն դնելու և ապա ինքնաբացարկ հայտնելու հիմքում, կանանց քաղաքական մասնակցության ցածր մակարդակի պատճառներն ու հատկապես կանանց ՏԻՄ մարմինների աշխատանքներին չմասնակցելու հետ առնչվող խնդիրները: Հարցազրույցների ընթացքում նաև դիտարկվել են ՀՀ քաղաքական համակարգում որպես համայնքի ղեկավար ներգրավվելուն նպաստող պատճառներն ու այլ հարակից խնդիրներ:

Համեմատական վերլուծության նպատակն էր համեմատել գործող և թեկնածու, ինքնաբացարկ հայտնած կանանց՝ քաղաքական կյանքին մասնակից դառնալու կամ չդառնալու շարժառիթները, բացահայտել կանանց քաղաքական մասնակցությանը նպաստող և խոչընդոտող գործոնները հատկապես համայնքային մակարդակում: Այս առնչությամբ քննարկվել են հետևյալ խնդիրները՝

- պաշտոնավարման ընթացքում առաջացող խոչընդոտները,
- պաշտոնավարման ընթացքում բռնության (ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական և այլն) հնարավոր դեպքերի առկայությունը,
- որոշումներ կայացնելիս կին առաջնորդների անկախությունը կամ որոշումների կայացման վրա ա/կուսակցության, բ/ընտանիքի, գ/համայնքի ազդեցությունները,
- ինչպիսին է աշխատանքային մթնոլորտը տղամարդկանց գերակշռության պայմաններում,
- արդյո՞ք քվոտաների ներմուծումը ՏԻՄ համակարգում կբարելավի իրավիճակը կանանց քաղաքական մասնակցության իմաստով,
- անազնիվ մրցակցությանն առնչվող տարբեր խնդիրներ,
- քաղաքականության մեջ կնոջ ներգրավվածությանը խոչընդոտող օբյեկտիվ պատճառները,
- այն պատճառների դիտարկումը, որը նպաստում է համայնքի ղեկավար լինելու, քաղաքական կյանքին ակտիվորեն մասնակցելու ցանկության առաջացմանը,
- կանանց չմասնակցության իրավական կամ հոգեբանական և անձնական պատճառների քննարկումը,

- համայնքի վերաբերմունքը կին առաջնորդների նկատմամբ,
- ընտրություններին մասնակցելու անձնական փորձի դիտարկում:

Փորձագիտական հարցումների նպատակն էր վերլուծել վերոնշյալ խնդիրները ոլորտում աշխատող և փորձառու մասնագետների մասնակցությամբ, ինչպես նաև քննարկել խոչընդոտները հաղթահարելու, լուծումներ առաջարկելու, մարտահրավերներին դիմակայելու, աջակցող և կանանց քաղաքական մասնակցությունը խթանելուն ուղղված ծրագրեր առաջարկելու տարբեր տեսանկյուններ:

Փորձագիտական հարցազրույցների համար ընտրվել են կանանց մասնակցային խնդիրներն ուսումնասիրող, տարբեր ոլորտներ ներկայացնող 10 մասնագետ, այդ թվում՝ ՀԿ ակտիվիստներ, վերլուծական կենտրոնների մասնագետներ, գիտնականներ, քաղ. ծառայողներ, լրագրողներ, հանրային կապերի մասնագետներ...⁸⁸ .:

Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունների հիմնական խնդիրն էր հասանելի վիճակագրական տվյալներով լրացնել որակական հետազոտական մասը՝ քանակական բաղադրիչով: Ուսումնասիրվել են կենսամակարդակի, կրթության, գործազրկության մակարդակի, ժողովրդագրական և այլ ցուցանիշներ գյուղաբնակ կանանց քաղաքական մասնակցությանն առնչվող որոշ խնդիրների վերաբերյալ՝ դիտարկելով նաև այդ ցուցանիշները համեմատության մեջ:

Կանանց քաղաքական մասնակցության խնդիրները տեղական ինքնակառավարման մակարդակում

Ելնելով կանանց քաղաքական մասնակցության խնդիրների վերլուծությունից՝ կարելի է առանձնացնել բազմաթիվ պատճառներ և նկատառումներ: Դրանք հիմնականում արտահայտվում են հասարակությանը բնորոշ կարծրատիպային մտածելակերպում, որոնք անընդհատ վերարտադրվում են կրթության և զանգվածային լրատվության միջոցների օգնությամբ: Մեզանում հաճախ նաև շահարկվում է կարծրատիպ դարձած այն կարծիքը, որ մարզերում կանանց վիճակը շատ ավելի վատ է՝ «ավանդական» կամ «նահապետական» մտածելակերպի պատճառով: Եվ եթե մայրաքաղաքում կամ հանրապետության մեծ քաղաքներում կանանց և տղամարդկանց՝ սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված հավասարությունը իրականում չի գործում, մարզերի մասին խոսելն ընդհանրապես ավելորդ է: Ցավոք, կարծրատիպերի վերարտադրությունն ավելի է վատթարացնում իրավիճակը, իրավահավասարության գաղափարն աղճատելով և ստեղծելով մի յուրօրինակ փակ շրջան, երբ կարծրատիպն ազդում է կանանց մասնակցության ակտիվացմանը, իսկ կանանց քաղաքական մասնակցության աստիճանի նվազումը բարերար հող է ապահովում կարծրատիպերի ամրապնդման համար: Բնական է, որ հայաստանյան հասարակական կարծիքի նման բովանդակությունն առավելապես ազդում է ՏԻՄ մակարդակում կանանց քաղաքական մասնակցության նվազման վրա, ինչին

գումարվում են նաև մարզերում առկա սոցիալ-տնտեսական հսկայական խնդիրները և արդյունքում կանանց խոցելիությունն առավելագույնի է հասնում: Հետազոտության արդյունքների վերլուծությունը հնարավորություն տվեց

- բացահայտել և սահմանել ՏԻՄ մակարդակում առկա մի շարք խնդիրներ,
- բացահայտել կանանց քաղաքական մասնակցության վրա ազդող գործոնները,
- վեր հանել կանանց քաղաքական մասնակցությանը նպաստող հանգամանքները:

Ընդհանրացնելով համայնքի կին ղեկավարների ներկայացրած ՏԻՄ մակարդակում առկա խնդիրները, կարող ենք դրանք պայմանականորեն դասակարգել որպես

- լուծելի կամ ընթացիկ-իրավիճակային
- անլուծելի կամ ինստիտուցիոնալ:

Ընդ որում, կանանց քաղաքական մասնակցությանն առնչվող խնդիրները հաճախ դիտարկվում են հենց համայնքի սոցիալական, տնտեսական, կենցաղային և այլ խնդիրների համատեքստում: Իրենց առաքելությունը կին ղեկավարները ձևակերպում են որպես «համայնքային սոցիալական և տնտեսական խնդիրների լուծում», բնակիչների տարրական պահանջների բավարարմանն ուղղված ծրագրերի ներդրում: Համայնքի ղեկավար կանանց իսկ սահմանմամբ լուծելի խնդիրները փոքրածավալ ներդրումներ պահանջող աշխատանքներն են՝ ջրագծի վերանորոգում, գյուղի գիշերային լուսավորության հարցի լուծում, որոշ համայնքային շինարարությունների իրականացում: Անլուծելի խնդիրները հիմնականում առաջանում են տնտեսական վատ

վիճակում գտնվելու պարագայում, ֆինանսական մեծ միջոցների բացակայության, դրանք ձեռք բերելու անհնարինության պայմաններում: Այս վերջիններն առաջանում են համայնքի ղեկավարների սահմանափակ լիազորությունների, հատկացվող միջոցների սղության և մարզպետարանից կամ նախարարությունից կախված այլ հանգամանքների պատճառով: Դրանք հիմնականում հետևյալներն են՝ միջհամայնքային ճանապարհների վատ վիճակ կամ գրեթե բացակայություն, հանրապետական հշանակության ճանապարհների բացակայություն, հանրային տրանսպորտի բացակայություն, մանկապարտեզների, դպրոցների, մշակութային, սպորտային տարբեր խմբակների բացակայություն կամ ստեղծելու անհնարինություն, գազաֆիկացման անհնարինություն և այլն:

Կանանց քաղաքական մասնակցությանը խոչընդոտող գործոններից նշվում են կարծրատիպերը և տնտեսական գործոնները: Հետաքրքիր է, որ առավելապես շեշտադրվում են ոչ թե կարծրատիպերը, որոնք համայնքի կին ղեկավարները հիմնականում համարում են հաղթահարելի, այլ գյուղերի տնտեսական վատ վիճակը: Նման մոտեցում արտահայտել են նաև փորձագետները, որոնք կանանց քաղաքական մասնակցության նկատմամբ բացասական վերաբերմունքը դիտարկում են ստեղծված կարծրատիպերով պայմանավորված, սակայն հաղթահարելի՝ համակարգված միջոցառումներ կազմակերպելու պայմանով: Այդ միջոցառումները պետք է իրականացվեն կրթության ոլորտում, օգտագործվեն ՁԼՄ ռեսուրսները: Որպես կանանց մասնակցությանը խոչընդոտող գործոն հաճախ ընդգծվում է վարչարարական, կառավարչական հմտությունների, մարդկային ռեսուրսների կառավարման

գիտելիքների պակասը: Մեծագույն խնդիր է համակարգչային և համացանցային հնարավորությունների պակասը:

Բոլոր հարցվողները միահամուռ էին այն տեսակետում, որ հասարակությունը կարծրատիպերի պատճառով չի ընկալում կնոջը որպես քաղաքական առաջնորդ, խնդիրներ լուծող, աղավաղված է կանանց և տղամարդկանց իրավահավասարության գաղափարը, ինչը ստեղծում է գենդերային կրթության անհրաժեշտություն:

Ուշագրավ էր այն դիտարկումը, որ համայնքի կին ղեկավարները երբևէ չեն ունեցել երազանք դառնալ ղեկավար, համայնքի առաջնորդ, քաղաքական գործիչ, դարձել են գյուղապետ, որովհետև

- նախկինում հայրը կամ ամուսինն են եղել գյուղապետ, գյուղացիները վստահել են
- եղել են գյուղի կրթված կամ կարող «հասնող» անդամ, ով աչքի է ընկել կամ անձնական կամ հասարակական որևէ խնդրի հաջող լուծմամբ:

ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց քաղաքական մասնակցությանն առնչվող հիմնախնդիրների դիտարկման և վերլուծության արդյունքում ատացված տվյալները կարելի է ամփոփել այն տրամաբանությամբ, թե ինչ պատճառների ազդեցությանն են ենթարկվում կանայք՝ քաղաքական մասնակցության մասին որոշումներ կայացնելիս, ինչի միջոցով կարելի է ձևակերպել դրանց շրջանցելուն ուղղված որոշ առաջարկություններ:

Այսպիսով, քաղաքական մասնակցության որոշմանը խոչընդոտող պատճառները կարելի է պայմանականորեն խմբավորել ըստ 2 տիպի գործոնների, որոնք բխում են

համայնքային մակարդակում կանանց քաղաքական մասնակցության խնդիրների վերը ձևակերպված դասակարգումից.

- Մեռով պայմանավորված խտրականության դրսևորումներ կանանց քաղաքական մասնակցության նկատմամբ (անմիջական ազդեցության գործոններ):
- Ընդհանուր սոցիալ-տնտեսական, քաղաքական պատճառներ, որոնք խոչընդոտում են կանանց քաղաքական մասնակցությանը (միջնորդավորված ազդեցության գործոններ):

Բնական է ենթադրել, որ առաջարկված դասակարգումը պայմանական է և հաճախ կանանց քաղաքական մասնակցության վրա ազդող գործոններն այնքան միահյուսված և փոխապայմանավորված են, որ դժվար է դրանք տեղավորել դասակարգման կոնկրետ հարթության մեջ, սակայն նման մոտեցումն օգնում է սահմանված խնդիրների լուծման առնչությամբ ձևակերպել կոնկրետ փոփոխությունների ծրագրեր և առաջարկություններ:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ կանանց քաղաքական մասնակցությունը խոչընդոտող գործոնները անմիջականորեն խտրականության դրսևորումներն են, սակայն տնտեսական, սոցիալական և այլ կողմնակի թվացող գործոնները նույնպես խիստ մեծ չափով նվազեցնում են կանանց մասնակցության մակարդակը և հատկապես դա տեսանելի է ՏԻՄ մակարդակում: Գյուղաբնակ կանանց շրջապատում ստեղծվում են սոցիալական, տնտեսական կամ կենցաղային թվացող խոչընդոտներ, որոնք

արմատացած կարծրատիպերի պատճառով հիմնականում չեն հաղթահարվում կողակից տղամարդկանց օգնությամբ, որոնք են՝

- մանկապարտեզների, կրթական, մարզական, այլ հասատատությունների բացակայությունը,
- տնտեսական գործունեություն ծավալելու անհնարինությունը ռեսուրսների անհասանելիության պատճառով,
- կրթական ծրագրերի բացակայությունը,
- լրացուցիչ/մասնագիտական կրթություն ստանալու անհնարինությունը,
- վերապատրաստման ծրագրերի անհասանելիությունը հատկապես հեռավոր սահմանամերձ գյուղերում,
- գյուղատնտեսական ոլորտի գիտելիքների պակասը,
- ժամանակակից տեխնոլոգիաների հետ աշխատելու հմտությունների բացակայությունը:

Այս ամենի հետևանքը դառնում է քաղաքական մասնակցության նկատմամբ եղած անհետաքրքրությունը, հետաքրքրվածության դեպքում ռեսուրսների ու հնարավորությունների, կամ գիտելիքների ու հմտությունների պակասը կամ բացակայությունը:

Կանանց քաղաքական մասնակցության պակասի պատճառներից շեշտադրվել են նաև կանանց «անվստահությունը սեփական ուժերի նկատմամբ», «հատկապես ընտանիքի, մասնավորապես ամուսնու, որոշ դեպքերում՝ հարազատների և ընկերների

աջակցության բացակայությունը»: Կին ղեկավարներն ու փորձագետները նշում էին ամուսինների կողմից կանանց աջակցելու կարևորությունը քաղաքական մասնակցության որոշում կայացնելիս, կարևորում էին կանանց՝ կրթության, վերապատրաստման ծրագրերին մասնակցելը, ինչը դրական ազդեցություն կունենա կանանց ինքնավստահություն, հավատ սեփական ուժերի նկատմամբ ձեռք բերելու գործում:

Նույնիսկ կին ղեկավարները, որոնք երկար տարիներ համայնքի ղեկավար են և լուծում են համայնքի կենսական խնդիրները, հաճախ դժվարանում էին պատասխանել այն հարցերին, որոնք վերաբերում էին առաջարկվող բարեփոխումներին՝ կանանց քաղաքական մասնակցությունը խթանելու նպատակով: Հաճախ նկատվում են խնդիրները լուծելու վերաբերյալ ոչ այնքան անհնարինություն, որքան ապրիորի անլուծելիության զգացողություն, երբ ուղղակի ցանկություն չկա դիտարկել խնդիրը լուծելու ճանապարհներ և հնարավորություններ: Այս և նմանատիպ դիտարկումները թույլ են տալիս հետևություններ անել այն մասին, որ փորձագետների կողմից նշված «կառավարչական հմտությունների բացակայությունը», տարբեր հասանելի միջոցներով խնդիրների լուծմանն ուղղված ռազմավարական պլանավորում իրականացնելու անկարողությունը նույնպես ստեղծում են տպավորություն, որ կին լինելն է խանգարում խնդիրների լուծմանը: Իրականում հետազոտության ընթացքում բազմիցս կրկնվեց այն ճշմարտությունը, որ նման ոլորտում աշխատելիս ի վերջո կարևորվում են մասնագիտական հմտությունները, գիտելիքներն ու կարողությունները, իսկ գենդերային անհավասարությունն ակնհայտ է դառնում միայն այն դեպքում, երբ կամ դեռ հայտնի

չեն կնոջ հնարավորությունները, կամ արդեն պարզ է, որ տվյալ անձն ուղղակի «կոմպետենտ չէ»: Այս դիտարկումների հետ է անմիջականորեն աղերսվում ինքնաբացարկ հայտնած կանանց՝ համայնքային զարգացման ծրագիր կամ տեսլական չունենալը, համայնքի ղեկավար դառնալու ոչ այնքան մեծ ցանկությունը, կարելի է նաև ասել՝ ոչ մի ցանկություն: Նշվածն, իհարկե կարելի է երկու տեսանկյունից դիտարկել և պատճառներն էլ կարելի է բխեցնել հետազոտության վերլուծությունից, երբեմն որպես «անհավասար մրցակցություն» գնահատվող երևույթի հետևանք՝ նախ, կանայք պարզապես ձևականորեն են մասնակցում ընտրություններին՝ այլընտրանք ապահովելով թեկնածուի համար, կատարելով մարիոնետի դեր, ինչի պատճառով որևէ տեսլական, ծրագիր ունենալն անիմաստ է, մյուս կողմից՝ այդ անհավասար մրցակցության պատճառները կանանց հնարավորությունների, գիտելիքների, նույն՝ տեսլական կամ դիրքորոշում առաջարկելու անկարողությունն է: Այս ամենը կրկին անգամ հանգեցնում են այն եզրակացության, որ **կանանց քաղաքական մասնակցությունը հատկապես տեղական ինքնակառավարման մակարդակում կարելի է խրախուսել և երաշխավորել կանանց հնարավորությունները հզորացնելու, կանանց տնտեսական, կրթական, սոցիալական պոտենցիալը վեր հանելու, կանանց՝ հասարակության բոլոր ոլորտներում ընդգրկվածությանը աջակցելու միջոցով:**

Հետաքրքիր էր հարցվողների վերաբերմունքը ՏԻՄ ընտրություններում, հատկապես կանանց քաղաքական մասնակցության նկատմամբ քվոտաների համակարգ ներմուծելուն: Խնդրի վերաբերյալ կարծիքները կիսվում են, առավել հաճախ ուղղակի ներկայացվում էին քվոտաների համակարգի դրական և բացասական կողմերն ու

հետևանքները: Հետազոտության արդյունքներն ամփոփելով կարելի է նշել, որ չնայած քվոտաների նկատմամբ արտահայտված որոշ բացասական վերաբերմունքին, այդ համակարգը կարող է մեծապես նպաստել կանանց քաղաքական մասնակցության ակտիվացմանը՝ պարզապես հաշվի առնելով 2 նկատառում՝

- ստեղծել այդ համակարգի ներդրման գործուն մեխանիզմներ
- քվոտաների համակարգի ներդրումն իրականացնել համակարգի մեջ՝ փոփոխություններ նախատեսելով նաև այլ ինստիտուտներում:

Հետաքրքիր էր նաև այն դիտարկումը, որ կին ղեկավարները հիմնականում աշխատում են փոքր, սահմանափակ բյուջե և կարողություններ ունեցող, սահմանամերձ համայնքներում: Այստեղ կարծես քաղաքական իշխանության համար պայքարը դառնում է անիմաստ իսկ համայնքի խնդիրները դիտարկվելով որպես կենցաղայինին մոտ խնդիրներ՝ համայնքը կարողանում է վստահել կանանց: Այստեղ նույնպես աշխատում է այն կարծրատիպը, որ «քաղաքականությունը կանանց գործը չէ», ինչի հետևանքով քաղաքական իշխանության ազդեցիկության տեսանկյունից առավել տպավորիչ համայնքներում տեսնում ենք տղամարդ ղեկավարներ, իսկ այն համայնքներում, որոնք առավել կենտրոնացած են սոցիալական, տնտեսական, նաև կրթական, աղքատությունը հաղթահարելուն ուղղված խնդիրները լուծելու վրա, կանանց ղեկավարումը դառնում է ընդունելի և բնական, քանի որ նմանեցվում է «տնային տնտեսության վարման» գործընթացին:

Վերոնշյալ դիտարկումներն ու քննարկումները միանշանակ ևս մեկ անգամ փաստում են Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացման

անհրաժեշտությունը, որը նույնպես կնպաստի տեղական ինքնակառավարման մակարդակում ժողովրդավարության, կանանց և տղամարդկանց իրավահավասարության հաստատմանը, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների արժեքների ամրապնդմանը:

Ամփոփում և առաջարկություններ

Կանանց քաղաքական մասնակցության խթանմանն ուղված առաջարկները բազմաթիվ են, դրանք բազմիցս ձևակերպվել են տարբեր ներպետական և միջազգային փաստաթղթերում, ոլորտին առնչվող հետազոտությունների արդյունքներում: Դրանցից շատերի առնչությամբ արդեն որոշակի քայլեր ձեռնարկվում են արդեն այսօր, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել այն բոլոր առաջարկությունները, որոնք ծնվել են հետազոտության արդյունքներն ամփոփելիս կամ հարցազրույցների և քննարկումների ընթացքում: Քանի որ խնդիրները բազմաբովանդակ են, առաջարկություններն էլ, բնականաբար, պետք է հիմնականում լուծեն հետևյալ խնդիրները

- Կնոջ քաղաքական մասնակցության վերաբերյալ կարծրատիպերի հաղթահարում, մասնավորապես ՏԻՄ մակարդակում, ՏԻՄ աշխատող կին գործիչների նկատմամբ
- Կին առաջնորդի դրական կերպարի ստեղծում, մասնավորապես համայնքի կին ղեկավարների, ավագանու կին անդամների դրական կերպարի ձևավորում

- Կանանց մասնակցության խթանում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, ռեսուրսների հավասար հասանելիության ապահովում
- Փոփոխություններ իրավական դաշտում՝ կանանց քաղաքական մասնակցությունը խթանելու և երաշխավորելու նպատակով
- Կանանց կրթական, մասնագիտական հմտությունների բարձրացմանն ուղղված աշխատանքներ, լրացուցիչ և շարունակական կրթության համակարգի ներմուծում և բարելավում:

Առաջարկությունները նույնպես, ինչպես և գործոնները պայմանականորեն բաժանել ենք 2 խմբի՝ ընդգծելով տեղական ինքնակառավարման մակարդակում կանանց քաղաքական մասնակցության վրա ազդող ա/անմիջական և բ/միջնորդավորված գործոնները, նշելով այն խնդիրներն ու արգելքները, որոնք ա/անմիջականորեն առնչվում են ընտրություններին և քաղաքական պայքարին և բ/ միջնորդավորված կերպով ձևավորում են կանանց քաղաքական մասնակցության համար անհրաժեշտ մթնոլորտ և միջավայր: Առաջարկներն ուղղված են օրենսդիրներին, քաղաքական գործիչներին, ոլորտում աշխատող պետական և հասարակական տարբեր կառույցներին, կրթական հաստատություններին, բարեգործներին: Մյուս կողմից, առաջարկությունները կարելի է խմբավորել որպես միջոցառումներ, գործունեություն, ծրագրեր, որոնք կլինեն՝

Իրավական/ինստիտուցիոնալ

- Մշակել քվոտաների համակարգ՝ կանանց քաղաքական մասնակցությունը ՏԻՄ մարմիններում երաշխավորելու նպատակով, ստեղծել այն իրականացնելու գործուն մեխանիզմներ
- Պետական միջոցառումների կիրառմամբ (ոլորտներին վերաբերող համապատասխան փաստաթղթերում առաջարկել լրացումների կատարում) ստեղծել կանանց՝ հասարակության տնտեսական և սոցիալական կյանքին առավել ակտիվորեն մասնակցելու հնարավորություններ, որոնցից կարելի է նշել ա/ աջակցություն կլին գործարարներին, հատկապես նրանց, ովքեր ցանկություն կունենան աշխատել գյուղական, սահմանամերձ համայնքներում
- Համայնքի ղեկավարների համար պարտադիր կազմակերպել վերապատրաստման դասընթացներ հանրային կառավարման, մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտներում:
- ՀԿ ներքին հետ համագործակցության միջոցով ստեղծել տեղեկատվական համացանցային (on-line) ռեսուրսներ, որտեղ կզետեղվեն տեղեկատվություններ գյուղատնտեսական ոլորտում միջազգային, միջպետական, բարեգործական և այլ ծրագրերի մասին, կներկայացվեն հաջողված ծրագրերը, հնարավորություն կտան ցանկացած համայնքի գյուղապետի առաջնորդությամբ իրականացնել զարգացման ծրագրեր:

Իրազեկող/տեղեկատվական

- Սոցիալական քարոզարշավների կազմակերպում, որոնք կնպաստեն ընդհանրապես գյուղապետի, մասնավորապես կին գյուղապետերի դրական կերպարի ստեղծմանը
- Կանանց քաղաքական, տնտեսական, սոցիալական դերակատարությունը դրականորեն ներկայացնող սոցիալական գովազդների ստեղծում և տարածում
- Այնպիսի ֆիլմերի կամ սերիալների ստեղծում, որոնք կնպաստեն կին գյուղապետերի դրական կերպարին, կքանդեն նախկին կարծրատիպերը
- Կազմակերպել քարոզարշավներ՝ հատկապես գյուղական համայնքներում կանանց քաղաքական մասնակցության անհրաժեշտությունը ներկայացնելու նպատակով
- Ոլորտի փորձագետների աջակցությամբ կազմակերպել տեղեկատվական քարոզարշավներ գյուղերի բնակիչների, ավագանու անդամների և համայնքների ղեկավարների հետ և/կամ մասնակցությամբ՝ համայնքի կին ղեկավարների, ավագանու կին անդամների գործունեության դրական կողմերը ներկայացնելու նպատակով
- Կազմակերպել աշխատանքներ տարբեր ձևաչափերով (քննարկում, ներկայացում, դերային խաղեր և այլն.) մարզպետարանների գենդերային հանձնաժողովների անդամների հետ նրանց աշխատանքը նպատակային, հասցեավորված, պարբերական դարձնելու նպատակով:

- Կուսակցությունների հետ աշխատանք՝ տվյալ կուսակցությունում կանանց դրական դերակատարությունն ընդգծելու, շեշտադրելու, կանանց քաղաքական առաջխաղացմանը նպաստելու նպատակով

Կրթական/հետազոտական

- Կազմակերպել մասնագիտական, մասնագիտական վերապատրաստման ծրագրեր գյուղական համայնքների կանանց համար, զարգացնել կամ ներդնել լրացուցիչ և շարունակական կրթության համակարգը գյուղերում
- Կազմակերպել գենդերային, կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրները լուսաբանող դասընթացներ մարզերում
- Կազմակերպել դասընթացներ և թրեյնինգներ կանանց համար հետևյալ ոլորտներում
 - Համակարգչային հմտություններ
 - Գրանտային ծրագրեր գրելու, միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների հետ համագործակցելու հմտություններ
 - Գյուղատնտեսական զարգացման հմտություններ և այլն

Հետազոտության արդյունքների հետագա զարգացման, առաջարկները հասցեատերերին ուղղելու նպատակով նախատեսում ենք տարբեր միջոցառումների կազմակերպում, որոնցից կարելի է նշել հետևյալները՝

- հետազոտության արդյունքների ներկայացում և առաջարկությունների քննարկում ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնում՝ ոլորտում աշխատող մասնագետների, քաղաքականություն մշակողների մասնակցությամբ
- հոդվածների պատրաստում տպագիր և համացանցային տարբեր միջոցների համար (օրինակ՝ www.womennet.am ոլորտի հիմնախնդիրները լուսաբանող համացանցային «Կինը և հասարակությունը» տեղեկատվական-վերլուծական պորտալում)
- օն-լայն քննարկման կազմակերպում Facebook սոցիալական ցանցի օգտատերերի շրջանակներում:

Հետազոտության արդյունքների ամփոփումն ու ձևակերպված առաջարկությունները կարող են հիմք հանդիսանալ հետազոտումնասիրությունների և վերլուծությունների համար: Հետազոտությունը կարող է առավել լայնածավալ հետազոտությունների համար դառնալ փորձնական (պիլոտային) ծրագիր: